ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 դեկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

180
(2846)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՎԱՔԸ՝ ԱՅՍՕՐ

Նախկին ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանն իշխանության գալուց հետո ամբողջությամբ կերպարանափոխվել եւ առավել վատ դրսեւորումներով նմանվել է իր կողմից ժամանակին սուր քննադատությունների ենթարկվող նախկին իշխանություններին:

Ինչպես կոռուպցիայի, ԽԾԲ-ի եւ այլ արատավոր երեւույթների դեպքում, այնպես էլ պետության կողմից պաշտոնյաներին տրամադրվող ծառայողական միջոցներն անհարկի վատնելու հարցում Նիկոլ Փաշինյանը հակառակվում է ինքն իրեն:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իշխանական վերնախավը երեկ, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հավաքվել էր Գյումրիում՝ քաղաքական ժողովի:

Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Նիկոլ Փաշինյանը եւ ՔՊ վերնախավը, որոնց մեծ մասը պետական բարձրաստիճան պաշտոնյաներ են, Գյումրի են գնացել ծառայողական ավտոմեքենաներով:

Այսինքն՝ «պադավատապետության» դեմ խիստ պայքար մղող Նիկոլ Փաշինյանը եւ նրա թիմակիցները հիմա մեծ հաճույքով օգտվում են դրա բարիքներից եւ իրենց կուսակցական հարցերը քննարկելու համար Գյումրի են հասել պետության կողմից սպասարկվող ծառայողական մեքենաներով՝ պետության հաշվին տրված դիզվառելիքով:

«Ժողովուրդ» օրաթերթն այս հարցի շուրջ պարզաբանում ստանալու համար փորձեց դիմել վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանին, սակայն վերջինս մեր զանգերին չպատասխանեց այդպես էլ: Մեկնաբանությունը ստանալուն պես կհրապարակենք: Իսկ մինչ այդ արձանագրենք, որ Նիկոլ Փաշինյանն իր կուսակցաշինությունը կառուցում է պետբյուջեի հաշվին: Ի դեպ, տեղեկացանք նաեւ, որ իշխանական վերնախավը երեկ, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, գիշերել են Գյումրու կենտրոնում գտնվող GRAND HOTEL GYUMRI by APRICOT հյուրանոցում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ երեկվանից Գյումրու փողոցներում ոստիկանությունը խիստ հսկողություն է իրականացնում, մի շարք փողոցներ էլ փակ են եղել Նիկոլ Փաշինյանի ժամանման առիթով:

Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, երեկ ՔՊ-ականները նախ տարբեր հանդիպումներ են ունեցել, իսկ արդեն երեկոյան՝ Նիկոլ Փաշինյանի ժամանելուց հետո, խնջույք են արել Գյումրիում:

Կուսակցության քաղաքական ժողովը տեղի կունենա այսօր:

ՀՀ վիճակագրական կոմիտեն ներկայացնում է, որ 2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից ապաստան հայցող անձանց քանակը կազմել է 950 մարդ: Տեղեկացնենք, որ ՀՀ-ից ապաստան հայցողների մեծ մասը Ուկրաինայից են՝ 472 անձ, 199-ը Իրաքից են, 101-ը Իրանից են: Հայաստանից ապաստան խնդրողներն այն երկրներից են, որտեղ այժմ ոչ խաղաղ կամ պատերազմական իրավիճակներ են: Ռուսաստանի Դաշնության միայն 18 քաղաքացի է դիմել ՀՀ ապաստան հայցելու նպատակով: Հայաստանում, հատկապես՝ Երեւանում, երբ ամեն քայլափոխին ռուսներ են եւ ռուսներին պատկանող սրճարաններ կամ այլ սպասարկման կետեր, զարմանալի է՝ նման քիչ թվով են դիմել ապաստան հայցելու: Այս փաստերին զուգահեռ՝ Հայաստանից կացության կարգավիճակ է ստացել 6 հազար 106 օտարերկրացի: Հայաստան եկածների, ապաստան խնդրածների եւ կացության կարգավիճակ ստացածների քանակական տվյալները ակնհայտ են, սակայն 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Հայաստանից արտագաղթած անձանց տվյալներ չկան: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ ունի, որ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիները դիմել են ՀՀ-ում Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ այլ դեսպանատներ՝ ապաստան հայցելով: Հավելենք նաեւ, որ Նիկոլ Փաշինյանն հենց ինքն էր մեկ ամիս առաջ կառավարության նիստում հայտարարել, որ արցախցիները արտագաղթել են Հայաստանից: «Այսօրվա դրությամբ ունենք Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 3000 անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունից դուրս են եկել, եւ ես չեմ ուզում հետեւություններ անել՝ այս թեմայի հետ կապված»:

Հակակոռուպցիոն կոմիտեն Մանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանին կկալանավորի: Նա անցնում է կաշառքի գործով, որի չափը, մեզ հասած լուրերի համաձայն, 20.000 դոլարի է: Նկատենք, որ Փոլադյանի շուրջ այս աղմուկը խիստ կասկածելի է: Բանն այն է, որ դատավորի կինը՝ Վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանը եւս անցնում է քրեական գործով: 2022 թվականի հոկտեմբերի 12-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից որոշում է կայացվել դատավոր Անի Հարությունյանի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ դատական իշխանության մարմնի պաշտոնատար անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանն օժանդակելու, ինչպես նաեւ դատավոր Ա.Հ.-ի կողմից նույն չափերով հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու համար: 2022 թվականի նոյեմբերի 8-ին քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, ստացվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ այն հաստատելու եւ վարույթի նյութերը դատարան հանձնելու միջնորդությամբ: Նշենք, որ Անի Հարությունյանն Ազգային անվտանգության ծառայության նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանի դուստրն է, հետախուզման մեջ գտնվող ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի քեռու աղջիկը: Իսկ, ահա, Տիգրան Փոլադյանի եղբայրը Դատական դեպարտամենտի նախկին ղեկավար Կարեն Փոլադյանն էր, որի գործունեության մասով 2021 թվականին գրել էինք, որ ՀՀ քննչական կոմիտեի հատուկ կարեւորագույն գործերով քննչական վարչությունում քրեական գործ է հարուցվել Դատական դեպարտամենտի ղեկավար կազմի գործողությունների մասով, իսկ այդ ժամանակ դեպարտամենտի ղեկավարը Կարեն Փոլադյանն էր: Ասել է թե՝ իրավապահները կոնկրետ գործընթաց են սկսել Փոլադյանի եւ նրա ընտանիքի անդամների մասով, չի բացառվում՝ քաղաքական իշխանության հրահանգով:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ Գորիսի ոստիկանապետ Մուշեղ Գեւորգյանին ազատ են արձակել: Իրավապահները գաղտնալսել են եւ բացահայտել, թե ինչպես է Գորիսի ոստիկանապետը մերժում իրեն զանգահարած ոստիկանության աշխատակիցներին՝ թույլ չտալով անտառից ծառ կտրել: Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ Գորիսի ոստիկանապետին տնից են հանել ու հրավիրել Հակակոռուպցիոն կոմիտե: Հիշեցնենք, որ Armlur.am-ը տեղեկություններ էր հրապարակել այն մասին, որ Գորիսի ոստիկանապետին եւ Կապանի ծառայության գծով փոխոստիկանապետին Երեւան էին տեղափոխել Սյունիքի մարզում անտառներից ապօրինի մասսայական ծառահատումների քրեական վարույթի շրջանակներում: ՀՀ ոստիկանության պաշտոնյաների հետ ձերբակալվել էին նաեւ մոտ 10 անձինք: Ի դեպ, Կապանի փոխոստիկանապետը եւ այլ պաշտոնյաներ կալանավորված են, իսկ Գորիսի ոստիկանապետին հարցաքննելուց հետո պարզել են, որ նա մասսայական ծառահատումները կանգնեցնելու համար դուրս է եկել կոնկրետ անձանց դեմ, ուստի ազատ են արձակել:

ԶՐՈՒՅՑ

Ի՞ՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ԱՐՑԱԽԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դեկտեմբերի 2-ին Արցախի պատգամավորները փակ նիստ են արել՝ քննարկելու իրենց առաջիկա անելիքները:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը մանրամասներ է հայտնել ԱԺ նիստից:

Պատգամավորի հետ խոսել ենք նաեւ առաջիկա անելիքների, ինչպես նաեւ իրենց նախաձեռնությամբ ստեղծվելիք ՅԿ-ի մասին:

-Տիկին Հակոբյան, դեկտեմբերի 2-ին հայտնի դարձավ, որ Արցախի պատգամավորները ԱԺ նիստ են արել եւ մի շարք հարցեր են քննարկել: Որքան ենթակա է հանրայնացման, կխնդրեմ նիստից մանրամասներ ներկայացնել: Ի՞նչ հարցեր եք քննարկել, ի՞նչ եզրահանգման եք եկել:

-Մինչ նիստը մենք բազմիցս հանդիպումներ ունեցել ենք եւ՛ առանձին խմբերով, եւ՛ ողջ կազմով մի քանի անգամ: Քննարկել ենք՝ փորձելով նախ եւ առաջ հասկանալ, որոշել մեր անելիքները, որովհետեւ ով, եթե ոչ մենք պետք է սկսենք քայլեր անել, եւ այդ որոշումներից մեկը այն է, որ մենք պարտավոր ենք եւ չենք դադարեցնելու ԱԺ նիստեր կայացնելը, բայց դրանք պետք է լինեն տեղին, ճիշտ եւ ըստ օրվա պահանջի: Այսինքն՝ օրակարգը պետք է հենց այդպես ձեւավորվի, որովհետեւ Արցախի Հանրապետության ներկայացուցիչները այսօր առավել քան անսովոր պայմաններում են գտնվում:

Նախ մենք ԱԺ-ում ունեինք երկու պատգամավորի թափուր տեղ, որոնք առաջացել էին մանդատը վայր դնելու արդյունքում, մյուսը՝ պետնախարարի պաշտոնը ստանձնելու պարագայում: Օրակարգի առաջին հարցը պատգամավորների երդմնակալությունն էր:

Երկրորդ հարցի մասին, ներողություն եմ խնդրում, նախընտրում եմ դեռ չխոսել, որովհետեւ կարծում եմ, որ պաշտոնապես Ազգային ժողովը պետք է խոսի այդ մասին:

Կարող եմ միայն ընդգծել, որ շատ կարեւոր հարց է քննարկվել՝ կապված մեր անելիքների հետ եւ այն ուղու հետ, որով մենք որոշել ենք գնալ:

-Տիկին Հակոբյան, քանի որ այս հարցը մամուլում շատ է քննարկվել, կցանկանայի իմանալ՝ արդյոք նիստի ժամանակ քննարկվե՞լ է Արցախի ինքնորոշման իրավունքի հարցը միջազգային հարթակներում:

-Մենք մինչ այս իրավիճակում հայտնվելը խոսել ենք, քննարկել ենք դա. այն առաջնային հարց է եւ առհասարակ ցանկացած գործընթացներում պետք է լինի մեր պահանջը մեր միջազգային իրավունքի իրացման, որովհետեւ աշխարհը ուզի-չուզի՝ մենք ինքնորոշվել ենք, եւ այդ ինքնորոշման իրավունքը մենք ձեռք ենք բերել եւ հետեւաբար աշխարհը պարտավոր է հենց մեր միջազգային իրավունքը հաստատել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԲԱՑՎԻ

ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը Ուրուգվայի Արեւելյան Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակներում հանդիպել է Ուրուգվայի փոխնախագահ, Սենատի նախագահ Բեատրիս Արխիմոնի հետ:

Սենատի նախագահը, ողջունելով նախագահ Վահագն Խաչատուրյանին, շնորհակալություն է հայտնել այցելության համար եւ շեշտել, որ ուրախ է Հայաստանի նախագահին ընդունել Ուրուգվայի Սենատում, որն իրենք անվանում են նաեւ «ժողովրդավարության տուն», քանի որ Ուրուգվայի համար ժողովրդավարությունն անհամեմատելի արժեք է եւ երկրում Հանրապետության հաստատումից հետո խորհրդարանական բոլոր կուսակցությունները եղել են իշխանության:

Հանրապետության նախագահը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ ընդգծել, որ ինչպես Ուրուգվայի, այնպես էլ Հայաստանի համար ժողովրդավարությունը բարձրագույն արժեք է: Վահագն Խաչատուրյանն իր խոսքում նշել է, որ անկախացումից հետո Հայաստանը որդեգրել հենց ժողովրդավարական ուղին զարգացման սկզբունքներ, եւ թեպետ անցած շուրջ 3 տասնամյակի ընթացքում ժողովրդավարացման գործընթացները մեր երկրում տարբեր փորձություններ են հաղթահարել, այնուամենայնիվ վերջին տարիներին Հայաստանը անշեղորեն առաջնորդվում է ժողովրդավարական արժեքներով եւ ժողովրդավարական ինստիտուտների կայացման դիրքորոշմամբ:

Այս համատեքստում նախագահ Խաչատուրյանը շեշտել է, որ ժողովրդավարական ինստիտուտների կայացման եւ ամրապնդման, ինչպես նաեւ ընդհանրապես Հայաստանի պետական կառավարման համակարգում շատ մեծ է խորհրդարանի դերը, քանի որ մեր երկիրը 2018 թվականից անցում է կատարել խորհրդարանական կառավարման համակարգի:

Զրույցի ընթացքում Հանրապետության նախագահը՝ի դեմս Սենատի նախագահի, շնորհակալություն է հայտնել Ուրուգվայի ժողովրդին եւ պետությանը Ցեղասպանությունն առաջինը ճանաչելու, ինչպես նաեւ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության դեմ ծառացած մարտահրավերների նկատմամբ հստակ եւ արդարացի դիրքորոշում ունենալու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ հայ-ուրուգվայական ոլորտային համագործակցության խթանման հնարավորությունները, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների, կրթության եւ այլ բնագավառներում:

Հավելենք նաեւ, որ նախագահ Վահագն Խաչատուրյանն իր խոսքում անդրադարձել է նաեւ հարավկովկասյան տարածաշրջանային առկա իրողություններին եւ զարգացումներին: Նախագահը վերահաստատել է հարեւանների հետ բարիդրացիական եւ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու հստակ դիրքորոշումը:

Հանդիպմանը երկուստեք դրական է գնահատվել առաջիկայում Ուրուգվայում Հայաստանի դեսպանատան բացումը, ինչը կնպաստի տարբեր մակարդակներում երկու երկրների փոխգործակցության ակտիվացմանը: Այս համատեքստում ընդգծվել է նաեւ բարձր մակարդակի քաղաքական փոխայցելությունների իրականացման եւ խորհրդարանական դիվանագիտության խթանման ուղղությամբ ջանքերի ներդրման անհրաժեշտությունը:

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ դաշնակցային կապերը փորձություններով են անցնում, քանի որ Արեւմուտքը փորձում է սեպ խրել երկու պետությունների միջեւ. այս մասին ասված է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի ուղերձում՝ «Հանրային դիվանագիտության դերն ու տեղը Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերությունների զարգացման գործում» նստաշրջանի մասնակիցներին:

«Այսօր Մոսկվայի եւ Երեւանի միջեւ դաշնակցային կապերը ստուգվում են մեր եղբայրական ժողովուրդների միջեւ հարաբերություններում սեպ խրելու Արեւմուտքի փորձերի լույսի ներքո», - ասել է Լավրովը: ՌԴ ԱԳՆ ղեկավարը նաեւ համոզմունք է հայտնել, որ «քննարկումների արդյունքում կմշակվեն գործնական առաջարկություններ, եւ կստեղծվեն փոխադարձ օգտակար շփումներ»:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ դեկտեմբերի 14-ին արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Նեպալի արտաքին գործերի նախարար Նարայան Պրակաշ Սաուդի հետ:

ԱԳՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Նեպալի միջեւ հարաբերությունների զարգացման հեռանկարները: Զրուցակիցներն ընդգծել են տարբեր բնագավառներում երկկողմ ներուժն առավել ակտիվ իրացնելու անհրաժեշտությունը՝ կարեւորելով իրավապայմանագրային դաշտի ընդլայնումը եւ առեւտրատնտեսական կապերի խորացումը:

Հանդիպման օրակարգում են եղել նաեւ միջազգային հարթակներում փոխգործակցության հարցեր: Երկուստեք գոհունակությամբ արձանագրվել է միջազգային հարթակներում, այդ թվում՝ դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներին առնչվող օրակարգային հարցերում կողմերի միջեւ համագործակցության փորձը:

Հայաստանի եւ Նեպալի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներն ընդգծել են նաեւ տարածաշրջանային փոխկապակցվածության կարեւորությունը:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՉ

«Իսկապես կարեւոր է, որ Երեւանն ու Բաքուն խոսում են միմյանց հետ եւ գործնական համաձայնությունների հասնում»,- «Ամերիկայի ձայն»-ին տված հարցազրույցում ասել է Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջեյմս Օ'Բրայենը՝ շեշտելով կալանավորների ազատ արձակման մասին համատեղ հայտարարությունն ու դրան հաջորդած գործնական քայլը:

«Այս շաբաթ կալանավորվածներն արդեն տանն են: Նրանք համատեղ հայտարարություն տարածեցին, որն ի ցույց է դնում աջակցություն միմյանց նկատմամբ բազմաթիվ առումներով՝ ներառյալ նրանց միջազգային ճգտումներին», - ասել է Օ'Բրայենը՝ հույս հայտնելով, որ շատ շուտով ականատես կլինեն, որ կողմերը հասնում են խաղաղության համաձայնագրի:

«Երկու կողմն էլ հայտարարել է, որ շահագրգռված է այդ անել: Մենք, նաեւ Եվրամիության մեր գործընկերները եւ մյուսները պատրաստ ենք օգնել: Կցանկանայինք տեսնել, որ այս ամենը շուտով իր ավարտին է հասել, քանի որ շուտափույթ խաղաղության կնքումը հսկայական օգուտներ կբերի», - ասել է ԱՄՆ պաշտոնյան:

Հարցին, թե արդյոք պետքարտուղարությունը կհյուրընկալի Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարներին մինչեւ տարեվերջ, Օ'Բրայենը պատասխանել է. «Այն, ինչ մենք ասել ենք երկու երկրներին, հետեւյալն է. շատ ուրախ ենք աջակցել նրանց միջեւ խաղաղության համաձայնագրի կնքմանը: Արդեն հյուրընկալել ենք երկու արտգործնախարարների միջեւ խաղաղ բանակցությունների մի քանի փուլ եւ այդ նորից կանեինք, եթե կողմերը որոշեին, որ դա կօգնի նրանց խաղաղություն կնքել: Մենք պատրաստ ենք օգնել: Երկու կողմերին էլ խրախուսում ենք հանդիպել, եւ մինչ այժմ յուրաքանչյուրն ասել է, որ պատրաստ է աշխատել այդ նպատակով»:

Ճշտող հարցին՝ մինչեւ այս տաեվե՞րջ, Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը պատասխանել է. «Այս տարվա համար բավարար ժամանակ չի մնացել, բայց մենք ամեն ինչ կանենք»:

Հայաստանի հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը հայտարարել էր, թե Ադրբեջանն ընդունել է հունվարին Վաշինգտոնում արտգործնախարարների հանդիպման ԱՄՆ-ի հրավերը: Հայտարարությունից ժամեր անց թե՛ Երեւանից, թե՛ Բաքվից պնդեցին՝ Վաշինգտոնում արտգործնախարարների հանդիպման պայմանավորվածություն չկա:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ ԿՔՎԵԱՐԿԵ՞Ն ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻՆ

Դեկտեմբերի 26-ին Երեւանի ավագանին այս տարվա վերջին նիստը կանի: Նիստին ներկայանալու եւ ավագանու հաստատմանն է ներկայացվելու համայնքի 2024թ.-ի բյուջեն եւ զարգացման հնգամյա ծրագիրը: Բյուջեն եւ զարգացման ծրագիրն ավագանու անդամներին է ներկայացնում համայնքի ղեկավարը, իսկ ավագանին դրանք հաստատում եւ ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ, այսինքն՝ այդ օրը նիստին ներկա ավագանու անդամների մեծամասնության քվեարկությամբ: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը եւ նրանց հետ կոալիցիա կազմած «Հանրապետություն»-ը ավագանիում միասին ունեն 32 մանդատ, իսկ ընդդիմադիր թեւից հանդես եկող 3 խմբակցությունները՝ «Ազգային առաջընթաց»-ը, «Մայր Հայաստան»-ը եւ «Հանրային ձայն»-ը, միասին ունեն 33 մանդատ: Ստացվում է՝եւ զարգացման ծրագիրը հաստատելու համար իշխանություններին անհրաժեշտ է լինելու ընդդիմությունից հավելյալ մեկ ձայն ստանալ:

Իսկ ի՞նչ տրամադրվածություն ունեն ընդդիմադիր 3 խմբակցությունները՝ «Ազգային առաջընթաց»-ը, «Հանրային ձայն»-ը եւ «Մայր Հայաստան»-ը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանն ասաց, որ ֆինանսիստների աշխատանքային խումբ են ստեղծել, որոնք ուսումնասիրում են բյուջեի նախագիծը, ըստ այդմ՝ կորոշեն՝ մասնակցեն բյուջեի քննարկմանը, թե ոչ:

«Դեռ ֆրակցիայի նիստ պետք է անենք, ֆինանսիստների խումբը մեզ կներկայացնի բյուջեի նախագծի հետ կապված նրբությունները, ըստ այդմ՝ մենք որոշում կկայացնենք: Խմբակցության նիստը տեղի կունենա ավելի ուշ՝ ավագանու նիստի նախորդող օրերին: Վերջնական որոշում այս պահին դեռ չունենք»,-ասաց նա: Ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանն էլ ասաց, որ դեռ քննարկումներ են ընթանում, իսկ որոշում մասնակցության մասով դեռ չունեն: «Մենք էլ ենք ուսումնասիրում, վերջում կորոշենք՝ գնանք , թե ոչ. դա նաեւ կախված է մյուս ֆրակցիաների որոշումներից»,-ասաց նա:

«Մայր Հայաստան»-ից եւս «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին, որ դեռ որոշում չունեն՝ ինչպես են վարվելու, քանի որ դեռ բյուջեն են ուսումնասիրում: Կհաջողվի արդյոք իշխանություններին մեկ ձայն կորզել ընդդիմադիրներից, կհաստատվի մայրաքաղաքի հաջորդ տարվա բյուջեն՝ պարզ կդառնա դեկտեմբերի 26-ին: Հավելենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի բյուջեն չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ: Եթե ավագանին մինչեւ տարվա սկիզբը համայնքի բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԿԱՆԱՋԵՐԾՈՒՄ՝ ⇨ ԼՂՀ-ՈՒՄ

Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահ զորախմբի հրամանատարությունը բանակցություններ է վարել ադրբեջանական կողմի հետ՝ համաձայնեցնելու տարածքի ականազերծման շուրջ. հայտնում է ՏԱՍՍ-ը:

«Ռուսական խաղաղապահ զորախմբի հրամանատարության եւ Ադրբեջանի ականազերծման գործակալության (ANAMA) ու Ադրբեջանի զինված ուժերի ինժեներական զորքերի ներկայացուցիչների միջեւ բանակցություններ են վարվել տարածքի համատեղ հումանիտար ականազերծման շուրջ համաձայնեցնելու հարցերի շուրջ»,- ասվում է տեղեկագրում:

Նշվում է, որ խաղաղապահները շարունակում են փոխգործակցությունը Բաքվի հետ՝ խաղաղ բնակչության նկատմամբ անվտանգությունն ու մարդասիրական իրավունքի պահպանումն ապահովելու համար

ԱՄՆ-Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը Թուրքիայի իր գործընկեր Հաքան Ֆիդանի հետ բոլոր շփումներում՝ լինի դա հանդիպում, թե հեռախոսազրույց, քննարկում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունները: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

Պաշտոնյան նաեւ անդրադարձել է Ֆիդանի՝ Բաքվում դեկտեմբերի 14-ին արած հայտարարությանն այն մասին, որ իր կարծիքով՝ Հայաստանն ու Ադրբեջանն ավելի քան երբեւէ մոտ են խաղաղության համաձայնագրին:

«Մենք ողջունում ենք այն, որ Թուրքիան արդյունավետ դեր է խաղում այս հակամարտությունը լուծելու հարցում: Մենք համաձայն ենք արտգործնախարարի ասածի հետ, որ խաղաղությունը հնարավոր է, եւ մենք կաջակցենք երկու կողմերի ուղիղ բանակցություններին դրան հասնելու համար», - ասել է Միլլերը:

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Քննչական կոմիտեում երեկ՝ ուշ գիշերին, ավարտվել է դեկտեմբերի 13-ին Ադրբեջանից Հայաստան տեղափոխված 32 գերիների հարցաքննությունը:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նրանք հարցաքննվել են 2020 թվականի 44-օրյա պատերազմին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում քննվող քրեական գործի շրջանակներում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՓՈԼԱԴՅԱՆԻ ԿԻՆՆ ՈՒ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դատական համակարգում իրարանցում է. ««Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատավորների մի խմբի տեղեկություններ են հասել, որ իրավապահները որոշ դատավորների մասով օպերատիվ տվյալների են տիրապետում:

Մասնավորապես՝ տվյալներ կան, որ դատավորներից մեկը կաշառք է վերցրել: Ավելին՝ մեզ հայտնի է դարձել, որ Սնանկության դատարանի դատավորներից կոնկրետ դատավորի շուրջ օղակը սեղմվում է: Ի դեպ, դատական համակարգում անուններ են տալիս, որոնք պոտենցիալ մեղադրյալներ են, սակայն «Ժողովուրդ» օրաթերթն այս պահին չի հրապարակում անմեղության կանխավարկածի սկզբունքը պահպանելու համար: Տեսնենք, թե ինչ արդյունք կունենա իրավապահների օպերատիվ տվյալների մշակումը, եւ ինչ է սպասվում Սնանկության դատարանի դատավորներին»:

Եվ, ահա, մեզ հայտնի դարձավ, որ նշյալ դատավորը Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլանդյանն է:

Նշենք, որ դատավորի կինը Անի Հարությունյանն է, որը եւս անցնում է քրեական գործով:

2022 թվականի հոկտեմբերի 12-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից որոշում է կայացվել դատավոր Անի Հարությունյանի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ դատական իշխանության մարմնի պաշտոնատար անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանն օժանդակելու, ինչպես նաեւ դատավոր Ա.Հ.-ի կողմից նույն չափերով հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու համար:

2022 թվականի նոյեմբերի 8-ին քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, ստացվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ այն հաստատելու եւ վարույթի նյութերը դատարան հանձնելու միջնորդությամբ:

2022 թվականի նոյեմբերի 10-ին հսկող դատախազն իր որոշմամբ հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել է Հակակոռուպցիոն դատարան, որտեղ էլ այս պահին ընթանում է դատական նիստը: Դատավոր Հարությունյանի պաշտպանը նշեց, որ դատական նիստը կարող են լուսաբանել, բայց ոչ տեսանկարահանել կամ լուսանկարահանել, ինչը գործը քննող դատավոր Տիգրան Դավթյանը բավարարեց:

Նշենք, որ Անի Հարությունյանն Ազգային անվտանգության ծառայության նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանի դուստրն է՝ հետախուզման մեջ գտնվող ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի քեռու աղջիկը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԳՈՐԾԸՆԹԱՑ՝ ԴԱՏԱՎՈՐԻ ԴԵՄ

Բարձրագույն դատական խորհուրդը բավարարել է դատավորի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ միջնորդությունը:

Բարձրագույն դատական խորհրդին միջնորդություն էր ներկայացվել՝ առերեւույթ կաշառքի առաջարկն ընդունելու եւ ստանալու մեղադրանքով կասկածվող՝ Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանի նկատմամբ վերջինիս լիազորությունների իրականացման կապակցությամբ հանրային քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու վերաբերյալ:

Բարձրագույն դատական խորհուրդը միաձայն որոշեց բավարարել դատավորի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ միջնորդությունը՝ հնարավորություն տալով Հակակոռուպցիոն դատարանին գործը քննել ըստ էության նախաքննության ավարտից հետո:

Բարձրագույն դատական խորհուրդը խստորեն դատապարտում է կոռուպցիոն ցանկացած երեւույթները եւ կշարունակի անզիջում պայքարը դրանց դեմ, առավել եւս՝ դատական իշխանության շարքերում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Դատական համակարգում իրարանցում է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատավորների մի խմբի տեղեկություններ են հասել, որ իրավապահները որոշ դատավորների մասով օպերատիվ տվյալների են տիրապետում:

Մասնավորապես՝ տվյալներ կան, որ դատավորներից մեկը կաշառք է վերցրել: Ավելին՝ մեզ հայտնի է դարձել, որ Սնանկության դատարանի դատավորներից կոնկրետ դատավորի շուրջ օղակը սեղմվում է: Ի դեպ, դատական համակարգում անուններ են տալիս, որոնք պոտենցիալ մեղադրյալներ են, սակայն «Ժողովուրդ» օրաթերթն այս պահին չի հրապարակում անմեղության կանխավարկածի սկզբունքը պահպանելու համար: Տեսնենք, թե ինչ արդյունք կունենա իրավապահների օպերատիվ տվյալների մշակումը, եւ ինչ է սպասվում Սնանկության դատարանի դատավորներին»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՆՔՆԱԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏԱՑԵԼ Է

Երեկ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի աշակերտները տարհանվել են, քանի որ նրանցից շատերը եւ ուսուցիչները սկսել են անսովոր հազալ, ոմանք տեղափոխվել են հիվանդանոց:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ դեկտեմբերի 15-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Արմավիրի մարզում. Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցից 15-ից ավելի երեխաներ տեղափոխվել են «Վաղարշապատ» բժշկական կենտրոն եւ Մուսալեռի բժշկական ամբուլատոր կենտրոն, մի մասին էլ տեղափոխել են Երեւանի տարբեր հիվանդանոցներ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի հետ՝ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել իրականում. «Ոչ թե գազի արտահոսք է եղել, այլ 10-րդ դասարանի աշակերտներից մեկը ինքնապաշտպանական գազային «բալոն» է ինքնագլուխ կիրառել, որը ժամանակավորապես թմրեցրել է աշակերտներին: Որեւէ մեկի առողջությանը, կյանքին սպառնացող վտանգ այս պահին չկա: Հիվանդանոց տեղափոխված երեխաները ոչ թե 15-ն են, այլ 8-ը, որից 4-ը դուրս են արդեն գրվել հիվանդանոցից, 3-ը՝ ընդունարանում են, պատրաստվում են դուրս գրվելուն, մեկն էլ ունեցել է այլ հիվանդություն. մայրը որոշել է պրոֆիլակտիկ հետազոտություն իրականացնել Երեւանում, սակայն նրա վիճակը եւս լավ է»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԵՐԵԽԱՆ ՀԱՆԿԱՐԾԱՄԱՀ Է ԵՂԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ դեկտեմբերի 14-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 01:00-ի սահմաններում Բյուրեղավանի շտապօգնությունից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգ է ստացվել, որ բժիշկների շտապօգնության հերթապահ խումբը կանչով մեկնել է Կոտայքի մարզի գյուղերից մեկի բնակչի տուն, որտեղ հայտնաբերել են մահացած երեխա. հաղորդում է Shamshyan.com-ը:

Նշված հասցե են մեկնել ոստիկանության Կոտայքի բաժնի եւ ոստիկանության Բյուրեղավանի բաժանմունքի օպերատիվ խմբերը, որոնք պարզել են, որ մահացածը նշված տան բնակիչ 9-ամյա Ա. Ի.-ն է:

Դեպքի փաստով Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել, իսկ մահացածի հարազատները ոստիկաններին ու քննիչներին հայտնել են, որ երեխան նույն օրը՝ ժամը 22:00-ի սահմաններում, հանկարծամահ է եղել:

Քննիչի որոշմամբ՝նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

ԳՈՒՄԱՐ Է ՓՈԽԱՆՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեկտեմբերի 11-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում էր տվել օտարերկրյա մի քաղաքացի: «Նիսան» մակնիշի տաքսի մեքենայի վարորդը դեկտեմբերի 8-ի լուսադեմին Երեւանի Գ. Քոչարի փողոցից նրան տեղափոխել էր բնակության հասցե՝ Էջմիածին քաղաքի Պատկանյան փողոց:

Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ այդ ընթացքում օգտվելով քաղաքացու ոչ սթափ լինելու եւ ճանապարհին քնելու հանգամանքից՝ վարորդը վերցրել էր նրա բջջային հեռախոսը եւ բանկային հաշվեհամարից մոտ 9 միլիոն դրամ էր փոխանցել իր հաշվեհամարին:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզել են տաքսի ծառայության վարորդի ինքնությունը: Էջմիածինցի 33-ամյա երիտասարդը հրավիրվել է բաժին, որտեղ խոստովանել է արարքը: Նա ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Վաղարշապատի քննչական բաժին:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԼՐԱԳԻՐՈՂԸ՝ ԸՆԴԴԵՄ «ՆԻԿՈԼԱԿԱՆԻ»

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգը տեղեկացնում է, որ 2023թ. օգոստոսի 4-ին Հռիփսիմե Հակոբի Ջեբեջյանը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Խաժակ Ռազմիկի Թանանյանի, հրապարակային արտահայտված վիրավորանքից պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու պահանջի մասին: 2023 թ. սեպտեմբերի 8-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Նոյեմբերի 3-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը որոշել է այդ քաղաքացիական գործով նախնական դատական նիստը նշանակել 2023 թ. դեկտեմբերի 14-ին՝ժամը 14:30-ին, ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Իջևանի նստավայրի շենքում: Հռիփսիմե Ջեբեջյանը «Առավոտ» օրաթերթի լրագրող է, որը վարչապետի մամուլի ասուլիսին դիպուկ հարց էր ուղղել Նիկոլ Փաշինյանին: Խաժակ Թանանյանը Իջևան քաղաքի կենտրոնում սրճարանի սեփականատեր է, նախկինում եղել է ՀՅԴ անդամ, Նիկոլ Փաշինյանի երկրպագու է:

ՔԻՉ ԱՐՏԵՐ, ՑԱԾՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետարանից տեղեկանում է, որ այս տարի Տավուշի մարզում հնձվել է 3092հեկտար ցորեն, հեկտարից միջին բերքատվությունը կազմել է 20.5 ցենտներ, մարզում հնձվել է 547 հեկտար գարի, հեկտարից միջին բերքատվությունը եղել է 20.2 ցենտներ: Մարզում հացահատիկի մշակության եւ արտերի բերքատվության վատ ցուցանիշներ են:

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Շուրջ 5 տարի է, ինչ Նոյեմբերյանից Տավուշի մարզկենտրոն Իջեւան եւ հակառակ ուղղությամբ հասարակական տրանսպորտ չի գործում: Նախկինում այդ երթուղում միկրոավտոբուս էր աշխատում, որի ուղեվարձը 500 դրամ էր, հետո այն բարձրացրին՝ դարձնելով 1000 դրամ: Համարելով, որ այդ երթուղին եկամտաբերություն չի ապահովում՝ այն փակեցին: Նոյեմբերյան խոշոր համայնքի բազմաթիվ բնակիչներ Իջեւանում ամեն օր գործեր են ունենում, կան Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղում սովորող նոյեմբերյանցիներ, Իեւնում գործող հիմնարկների նոյեմբերյանցի աշխատողներ, սակայն Նոյեմբերյան խոշոր համայնքի բնակավայրերը Իջեւանին կապող հասարակական տրանսպորտ չկա: Պետական հիմնարկներում աշխատող նոյեմբերյանցիներն աշխատանքային ամեն օր Նոյեմբերյանից Երեւան մեկնող միկրոավտոբուսով են գնում եւ դրանով աշխատանքից տուն վերադառնում, սակայն մայրաքաղաք մեկնող միկրոավտոբուսում հաճախ ազատ տեղեր չեն լինում: Տավուշի մարզպետարանը պետք է գործնական քայլեր ձեռնարկեր մարզկենտրոնը Նոյեմբերյան խոշոր համայնքին կապող երթուղի գործարկելու մասին, սակայն խնդիրը չի լուծում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԿԱՐԵՎՈՐՎԵԼ Է ԼՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստան է ժամանել Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էնդրյու Թըրներին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԿԳՄՍ նախարարը կարեւորել է Հայաստանում Կանադայի դեսպանության բացումը՝ վստահություն հայտնելով, որ, որպես Հայաստանում Կանադայի առաջին դեսպան, Էնդրյու Թըրներն իր գործունեությամբ նոր լիցք կհաղորդի արդեն իսկ լավ հիմքերի վրա կառուցվող հայ-կանադական բարեկամական հարաբերություններին:

Նորանշանակ դեսպանին ներկայացվել է կրթական համակարգի բոլոր մակարդակներում իրականացվող բարեփոխումները՝ առաջարկելով դիտարկել ինչպես մասնագիտական կրթության ու ուսուցման, այնպես էլ բարձրագույն կրթության ու գիտության ոլորտներում երկկողմ համագործակցության ընդլայնման հեռանկարները: Դեսպանի ուշադրությունն է հրավիրվել ակադեմիական քաղաքի նախագծին՝ ընդգծելով, որ «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրով» նախատեսվում է նոր ենթակառուցվածքի ստեղծում՝ բուհերի եւ գիտահետազոտական կազմակերպությունների համար արդիական միջավայր ապահովելու նպատակով:

Անդրադառնալով սպորտի ոլորտում համագործակցության հեռանկարներին՝ ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է, որ այս օրերին Հայաստանի պատվիրակները Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում ներկայացնում են Հայաստանի՝ 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերն ընդունելու հայտը:

«Ֆրանկոֆոնիայի խաղերի միջոցով հանրահռչակվում են ֆրանկոֆոն երկրների արժեքները ժողովրդավարության ու խաղաղության վերաբերյալ, ինչը շատ կարեւոր է մեզ համար»,- ասել է Ժաննա Անդրեասյանը եւ շնորհակալություն հայտնել Կանադայի կառավարությանը՝ բարդ ժամանակահատվածում Հայաստանին ցուցաբերած աջակցության եւ օժանդակության համար: ՀՀ-ում Կանադայի նորանշանակ դեսպանը ընդգծել է, որ Կանադան աջակցում է Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը եւ կարեւորում միջմշակութային երկխոսությունը: ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է նաեւ Լեռնային Ղարաբաղում հայկական պատմամշակութային ժառանգությանը սպառնացող վտանգին՝ շեշտելով, որ 2020 թվականից ի վեր չի հաջողվում ԼՂ գործուղել միջազգային փաստահավաք առաքելություն, որը կկարողանար տեղում արձանագրել հայկական մշակութային ժառանգության ներկա իրավիճակը: Նախարարն ասել է, որ 5000-ից ավելի հուշարձաններ եւ 20-ից ավելի թանգարաններ մնացել են Լեռնային Ղարաբաղի տարածքում, որոնց պաշտպանության խնդիրն առավել սրվել է սեպտեմբերի 19-ի իրադարձություններից հետո:

Հավելենք, որ ՀՀ-ում Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էնդրյու Թըրները նշել է, որ Լեռնային Ղարաբաղում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության պաշտպանության հարցի բարձրաձայնումը միջազգային հարթակներում կարեւոր է, եւ կանադական կողմն այս առումով պատրաստ է ներդնել առավելագույն ջանքեր: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սովորողների եւ ուսանողների կրթության իրավունքի իրացմանը, ուսուցիչների աջակցության եւ վերապատրաստման ծրագրերին:Քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ԱՆՑՅՈՒԴԱՐՁ

ՔԱՂԱՎԻԱՑԻԱՆ ՈՒ ՍԿԱՆԴԱԼԸ

«Ժողովուրդ» օրաթերթը նախօրեին գրել էր՝ինչպես էր «Զվարթնոց»-ի անվտանգության տեսախցիկների նկարածը հայտնվել ՔՊ-ամերձ կայքերում. ոչ ոք չի ենթարկվել պատասխանատվության: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր «Զվարթնոց» օդանավակայան՝ հասկանալու համար՝արդյոք որեւէ գործընթաց եղել է, թե հիմա էլ, ինչպես այդ ժամանակ, հեշտ է օդանավակայանի տեսախցիկների արտահոսք ապահովել: Մեզ պատասխանել էին. «Ինչպես արդեն պատասխանել ենք Ձեր լրատվամիջոցի նախորդ հարցմանը, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն. առաջարկում ենք դիմել ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե»:

Հետեւելով նշված բացատրությանը՝ «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ Քաղավիացիայի կոմիտե, որտեղից մեզ պատասխանեցին, որ տեղյակ չեն՝ նույնիսկ ինչ է կատարվել:

«Եթե այս լուսանկարը նույնիսկ անվտանգության տեսախցիկից է արված, Քաղավիացիան, օրինակ, ինչ-որ գործի շրջանակներում կարող է լուսանկարներ պահանջել Ավիացիոն անվտանգության վարչությունից: Այդքան էլ հեշտ չի մտնել եւ նկարել անվտանգության տեսախցիկները: Նույնիսկ մեր Կոմիտեի աշխատակիցների համար կամ այլ անձանց համար, եթե անհրաժեշտություն կա անվտանգության տեսախցիկների նկարահանածը տեսնել, ապա անհրաժեշտ է համապատասխան գրություն ուղարկել եւ համապատասխան պատճառաբանություն բերել: Այս մասով այլ տեղեկություններ չեմ կարող տալ: Դեպքը եղել է մեկ տարի առաջ, եւ չեմ կարողանում ոչ մի կերպ կապել մեզ հետ»:

Քաղավիացիայում նույնիսկ տեղյակ չէին, որ մեկ տարի առաջ հայտնվել են սկանդալի կիզակետում, եւ մինչեւ այսօր ոչ ոք պատասխանատվություն չի կրել գաղտնի պահվող ինֆորմացիան հանրայնացնելու համար:

ՎԱՌԵԼԻՔԸ ԿԹԱՆԿԱՆԱ՞

Հայաստանի կառավարությունը հավանություն է տվել ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի համաձայնագրի նախագծին: Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի բոլոր կողմերի կողմից վավերացնելուց հետո: Համաձայնագրի պայմաններով իրանական կողմն ապահովում է ներմուծման մաքսատուրքերը զրոյացնելու պարտավորություններ: Բացի այդ, ԵԱՏՄ անդամ երկրներից Իրան ապրանքների մատակարարումները կապահովվեն առանց անցումային շրջանների:

Մանր եւ միջին բիզնեսի իրավապաշտպան Սամսոն Գրիգորյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում փաստեց, որ Իրանի հետ առեւտուրը շահավետ կլինի Հայաստանի համար գնային առումով, իսկ հայ-ռուսական հարաբերությունները դժվար թե այս պատճառով տուժեն, քանի որ արդեն բավականին վատացել են:

Կստացվի, որ այս համաձայնագրով Հայաստանում վառելիքի շուկայի մոնոպոլիան, հնարավոր է, առիթից օգտվելով, արհեստական գնաճ ստեղծի շուկայում: Նման դեպքերը նորություն չեն հայկական վառելիքի շուկայում, քանի որ վերջին հինգ ամիսներին 1-2 ամսվա տարբերությամբ թե՛ գազը, թե՛ հեղուկ գազը գնային անկումներ ու գերաճ են ունեցել արհեստական կերպով խոշոր խաղացողների կողմից գնային սանդղակը բարձրացնելու պատճառով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ Է ԿԱՆՉՈՒՄ

Դեկտեմբերի 7-ին ԱԺ բարձր ամբիոնից ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը թիրախավորել է ազատ մամուլին եւ զրպարտել՝ հայտնելով, թե գիտեն՝ ինչպես են Հայաստանում հոդվածներ տպագրվում. փողը տալիս են, պատվիրում են եւ պախարակում պաշտոնյաներին: Նա հնչեցրել է «Ժողովուրդ» օրաթերթի, «Հրապարակի» եւ այլ ԶԼՄ-ների անունները:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագիրը Ազգային ժողովում մոտեցել է Արթուր Հովհա ննիսյանին, պահանջել միասին գնալ դատախազություն կամ ԱԱԾ՝ իմացած ենթադրյալ հանցանքի մասին հաղորդում տալու: ՔՊ խմբակցութան ղեկավարը հրաժարվել է «Ժողովուրդ» օրաթերթի ներկայացուցչի հետ իրավապահ մարմիններ գնալ: «Չեմ մեկնաբանում»,- միայն այս միտքն է հնչեցրել Արթուր Հովհաննիսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի մեր գործընկերները արձանագրում են, որ Արթուր Հովհաննիսյանը չի կարողացել բացատրություն տալ, թե ինչ հիմքով է

երկրի թիվ մեկ ամբիոնից հնչեցրել անպատասխանատու խոսք, սուտ եւ զրպարտություն:

Տեղեկացնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով դիմում է դատարան՝ պատասխանատվություն պահանջելով ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանից:

Հիշեցնենք, որ Արթուր Հովհաննիսյանից ներողություն խնդրելու պահանջ են ներկայացրել նաեւ «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը, «Հրապարակ» օրաթերթը՝ դարձյալ անպատասխանատու խոսքեր ամբիոնից հնչեցնելու համար:

Հավելենք, որ մեդիափորձագետ, «Մեդիամաքս»-ի գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանը, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Սաթիկ Սեյրանյանը եւս պահանջել են Արթուր Հովհաննիսյանից ներողություն խնդրել «Ժողովուրդ» օրաթերթից՝ առանց հիմքերի եւ ապացույցների զրպարտանք տարածելու համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԳԱՂԱՓԱՐԸ

«Մենք աջակցում ենք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հռչակած «Խաղաղության խաչմերուկ» նախագծի կառուցմանը: Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի չորրորդ փուլի շինարարությունը ֆինանսավորվում է Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցով»,- դեկտեմբերի 15-ին Երեւանում հայտարարեց ՌԴ կառավարության փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը:

«Այս գծով աջակցության ծավալն այժմ կազմում է 150 մլն դոլար, ինչպես նաեւ ներկայումս հիմնադրամի կոլեգիալ մարմինների կողմից հաստատվում է Քաջարանի թունելի կառուցմանն աջակցելու որոշումը: Այնտեղ աջակցության ծավալը կկազմի 200 մլն դոլար:

Հիմնադրամի ներդրումների ամբողջ պորտֆելը Հայաստանում՝ 10 ծրագրերով, գնահատվում է 533 մլն ԱՄՆ դոլար: Բացի այդ, եւս 300 միլիոն դոլար արժողությամբ նախագծերը ներկայումս սպասում են հաստատմանը»,- նշել է Օվերչուկը:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ՖԻԹՆԵՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ֆիթնեսի ոլորտի ներկայացուցիչները, Երեւանում եւ ՀՀ մարզերում գործող տարբեր մասնավոր կառույցների ղեկավարները այցելել են ԿԳՄՆ:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ոլորտի ներկայացուցիչներին ԿԳՄՍ նախարարության հրավերն ընդունելու եւ համատեղ քննարկումներ իրականացնելու պատրաստակամության համար: Նախարարը տեղեկացրել է, որ կառավարությունը հաստատել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների ռազմավարությունը, որի առանցքային թիրախներից մեկը Հայաստանի տարբեր բնակավայրերում ֆիզիկական ակտիվության ու սպորտով զբաղվելու հնարավորությունը քաղաքացիների համար հասանելի դարձնելը եւ առողջ ապրելակերպը խթանելն է:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ Հայաստանի ավելի քան 70 խոշորացված համայնքներում նախատեսվում է ունենալ տիպային մարզական կառույց՝ լողավազանի, խաղային մարզաձեւերի, ֆիթնես դահլիճների եւ այլ հնարավորություններով: Արդեն իսկ մշակված է նաեւ տեխնիկական առաջադրանքի նախագիծ: Նախարարը հայտնել է նաեւ, որ եկող տարվա համար արդեն նախատեսված է նման կառույցների նախագծումը Եղեգնաձորում եւ Բերդում: Այս համատեքստում ԿԳՄՍ նախարարն առաջարկել է դիտարկել մասնավոր հատվածի հետաքրքրությունն ու համագործակցության հնարավորությունները ինչպես մարզահամալիրների նախագծման, կառուցման, այնպես էլ դրանց կառավարման գործընթացներում:

«Վստահ եմ՝ ձեր մասնագիտական գործունեության ընթացքում արձանագրել եք շատ կարեւոր նրբություններ, որոնք մեզ համար գուցե այնքան էլ տեսանելի չեն: Պատրաստ ենք լսելու ձեր դիտարկումները տեխնիկական առաջադրանքի նախագծի վերաբերյալ ու քննարկելու համագործակցության հնարավորությունները բոլոր գործընթացներում՝ թե՛ շինարարության, թե՛ կառավարման: Կարծում եմ՝ համատեղ ուժերով կկարողանանք աշխատանքներն ավելի արդյունավետ իրականացնել»,- ընդգծել է նախարարը:

Ոլորտի ներկայացուցիչները կարեւորել են նմանօրինակ նախաձեռնությունն ու տարբեր ուղղություններով համագործակցության պատրաստակամություն հայտնել, ինչպես նաեւ ուղղել հետաքրքրող մի շարք հարցեր: Արձագանքելով նրանց հարցադրումներին՝ նախարարը տեղեկացրել է, որ ֆիզիկական ակտիվության ու սպորտով զբաղվելու պետական ծրագիրը դեռեւս իրագործվելու է միայն ՀՀ մարզերում:

«Տեսնում ենք, որ Երեւանում ոլորտը զարգանում է, իսկ մարզերում դեռեւս շատ լուրջ խնդիրներ ունենք, օրինակ, լողավազանների եւ բազմաթիվ այլ ենթակառուցվածքների հասանելիության հետ կապված: Ինչ վերաբերում է տիպային կառույցներին, ապա որոշակի ուսումնասիրություն է կատարվել, թե նման ֆունկցիոնալություն ունեցող մարզահամալիրներն ինչ ենթակառուցվածքներ ունեն, հատկապես երբ մենք կարեւորում ենք լողավազանի առկայությունը: Մարզերում սա իսկապես լուրջ խնդիր է»,- ասել է Ժաննա Անդրեասյանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ ֆիզիկական ակտիվության ու սպորտով զբաղվելու կենտրոններում գործունեություն ծավալող մարզիչների մասնագիտական որակավորման խնդրին: Հավելենք, որ քննարկվել են մարզահամալիրների գործունեության կարգավիճակին, դրանցում ընդգրկվելիք մարզիչների վերապատրաստմանն ու, ըստ անհրաժեշտության, տարբեր համայնքներում արդեն իսկ գործող մարզահամալիրների պահպանությանը վերաբերող հարցեր:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՈՒՄՔԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Հայրապետյանի եւ ՌԴ անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայության («Ռոսսելխոզնադզոր») ղեկավար Սերգեյ Դանկվերտի վերջին հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ Հայաստանում կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների արտադրանքի մատակարարումները Ռուսաստան վերսկսելու խնդիրը:

Հանդիպման արդյունքում ձեռք բերված՝ համատեղ վերահսկողական միջոցառումներ անցկացնելու մասին պայմանավորվածությունը ՍԱՏՄ ղեկավարը ներկայացրել է տեսչական մարմին հրավիրված Հայաստանի կաթնամթերք արտադրող եւ արտահանող ընկերությունների ներկայացուցիչներին:

Արմեն Հայրապետյանը տնտեսվարողներին հիշեցրել է ռուսական կողմի պահանջը՝ ՌԴ արտահանվող կաթնամթերքի հումքը պետք է լինի բացառապես հայկական, ու նաեւ հորդորել հստակ գնահատել իրենց արտադրություններում առկա ռիսկերը, վերացնել դրանք, արտադրական ողջ գործընթացը համապատասխանեցնել ԵԱՏՄ օրենսդրությամբ եւ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, ներդնել Վտանգի վերլուծության եւ հսկման կրիտիկական կետերի համակարգը (HACCP): Նա վստահեցրել է, որ տեսչական մարմնի մասնագետները պատրաստ են տրամադրելու համապատասխան մասնագիտական աջակցություն՝ առկա խնդիրները արագ լուծելու համար:

Կաթնամթերք արտադրողներն արձանագրել են, որ այսպիսի հանդիպումներն արդյունավետ ձեւաչափ են առաջացած խնդիրների մասին բարձրաձայնելու եւ դրանց շուրջ պարզաբանումներ ստանալու համար:

ԿՆԻՔԻ ԿԱՐԻՔ ՉԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանից դուրս գալու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ ՀՀ քաղաքացիների անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի վերաբերյալ նշում (ելքի կնիք) կատարելու վերաբերյալ պահանջը չի գործելու 2024 թ. հունվարի 1-ից:

2023 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունել է փոփոխություններ կատարելու վերաբերյալ համապատասխան որոշում, համաձայն որի՝ 2024 թ. հուվարի 1-ից ՀՀ տարածքից դուրս գալու համար ՀՀ քաղաքացիները կազատվեն իրենց անձնագրերում օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի վերաբերյալ նշում կատարելու պահանջից:

Մինչեւ 2023 թ. դեկտեմբերի 31-ը նեռառյալ ՀՀ սահմանը հատող անձանց համար կարգավորումը դեռ գործում է, եւ կնիքի առկայությունը անձնագրում պարտադիր է:

Նշված փոփոխությունների մասին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը պաշտոնապես ծանուցել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Գործնականում հնարավոր է, որ առանձին պետությունների որոշ սահմանային անցակետերում անձնագրային հսկողություն իրականացնող աշխատակիցները դեռեւս պատշաճ կերպով իրազեկված չլինեն այս փոփոխությունների մասին: Նման դեպքերում ՀՀ քաղաքացիները կարող են օգտվել ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքի հղումներից՝ որպես օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշման պահանջի վերացման պաշտոնական ապացույց:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՄԱՆՈՐ

ԹՓՈՎ ՏՈԼՄԱՆ ՈՒ ՁԻՐՈՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է անցնող տարվա ամփոփման շարքը: Այս անգամ զրուցել ենք դերասան, հումորիստ Զիրոյանի հետ:

-Զիրոյան ջան, եթե 2023 թվականը երեք բառով բնութագրեք, ինչպիսի՞ն էր այն Ձեզ համար:

-Լարված, բուռն ու ստեղծագործական:

-Ո՞րն է եղել ամենամեծ խնդիրը, որ լուծել եք 2023-ին:

-Թերեւս նման մեծ մասշտաբի խնդիր չեմ ունեցել, Փառք Աստծո, սակայն ինչ էլ, որ եղել է, շատ գեղեցիկ ու հետաքրքիր լուծում եմ տվել:

-Կա՞ մի բան, որ 2023-ի մասին հիշելիս Ձեզ ժպիտ է պարգեւում:

-Ինչ ձեռքբերում, որ ունեցել եմ, դա էլ ժպիտ է պարգեւել:

-Ամանորին ի՞նչ եք սիրում խմել՝ գինի՞, օղի՞, կոնյա՞կ, գուցե գարեջո՞ւր կամ վիսկի՞...

-Ամանորը իմ՝ խմիչք նախընտրելու հետ այդքան էլ կապ չունի: Ալկոհոլ չեմ օգտագործում առհասարակ:

-Այդուամենայնիվ, Ամանորն այն տոնն է, որ, թեկուզ մտովի, բոլորս էլ խմում կամ կենաց ենք ասում: Ի՞նչ կենաց եք առաջինը խմում սկսվող տարում կամ ո՞ւմ եք հղում առաջին մաղթանքը:

- Իհարկե, նշեցի, որ չեմ խմում, բայց դա ինձ չի սահմանափակում սահմանին կանգնած զինվորներին բարօրություն ցանկանալ:

-Քանի՞ ընկեր ունեք, հաշվե՞լ եք երբեւէ:

-Ամբողջ կյանքիս ընթացքում երբեւէ չեմ հաշվել՝ քանի ընկեր եմ կորցրել կամ քանի ընկեր ունեմ, քանի որ նրանց թվաքանակով չեմ ընդունում եւ ունեմ շատ լավ ու կամեցող ընկերներ, որ միշտ կողքիս կանգնած են՝ անկախ ամեն ինչից:

-Իսկ կհիշե՞ք՝ քանիսին եք կորցրել 2023-ին:

-Փառք Աստծո, ոչ մեկին: Ես ամուր եմ պահում իմ ընկերությունը: Սա կփաստեն նաեւ հենց իմ ընկերները:

-Ձմեռ պա՛պ, թե՛, ամեն դեպքում, Ձյունանուշ. ո՞ւմ եք ամենաշատը հավատում:

-Դե, իհարկե, Ձմեռ պապը Նոր տարվա ամենասպասելի հյուրն է բոլորի ընտանիքներում, բայց իմը Ձյունանուշն է (սա, իհարկե, որպես հումոր):

-Ի՞նչ եք ուզել Ձմեռ պապիկից այս տարի:

-Ինչպես բոլոր հայրենասեր մարդիկ, միմիայն խաղաղություն:

-Ձեզ խելոք պահե՞լ եք, ի՞նչ եք կարծում, նվեր կբերի՞:

-Ես այնքան խելոք եմ ինձ պահել, որ ես էլ իրեն նվեր ունեմ տալու:

-Հունվարի մեկին բարձի տակ նայելո՞ւ եք՝ նվեր կա, թե չէ:

-Չեմ նայելու. բարձ չունեմ:

-Հաշվարկ ունե՞ք՝ այս Ամանորը ինչքան կխլի Ձեր ընտանեկան բյուջեից:

-Ամանորյա ծախսերի հաշվարկը միշտ անկանխատեսելի է. չգիտես՝ ինչքան կծախսես: Դա էլ, կարծում եմ, կապված է նրա հետ, որ մենք սիրում ենք առատ սեղաններով հյուրեր ընդունել Նոր տարուն:

-Կա՞ ուտեստ, որ ողջ տարին սպասում եք՝ Ամանորին համտեսեք:

-Մայրիկիս պատրաստած խաղողի թփով տոլմայի համար խելագարվում եմ, իսկ, առհասարակ, Ամանորի հետ ասոցացնում եմ ընդեղենը:

-Ի՞նչ մոտիվացիայով եք մտնում 2024 թվական:

-Մոտիվացիան միայն ստեղծագործական է՝ աշխատել՝ հանդիսատեսին գոհացնելու համար:

-Մեր ընթերցողին ի՞նչ եք մաղթում:

-Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ, եղե՛ք բարի:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԲԱՐԵԼԱՎՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարության որոշմամբ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերի իրականացման համար հատկացված միջոցների միջեւ կատարվել է վերաբաշխում՝ 299 մլն 252 հազար դրամ գումարի չափով: Վերաբաշխման արդյունքում առաջացող մնացորդը՝ 14,5 մլրդ դրամի չափով, կուղղվի Կառավարության պահուստային ֆոնդ:

Որոշման ընդունմամբ կապահովվեն մի շարք կրթական, մշակութային եւ մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման եւ գույքային հագեցվածության գործընթացները, որոնք կրում են շարունակական բնույթ: Այն առաջնային եւ կարեւորագույն խնդիրներից է նշված ոլորտներում պետության որդեգրած քաղաքականության պատշաճ իրականացման համար:

Ըստ այդմ՝ որոշմամբ 223 մլն 101 հազար դրամ կուղղվի հաստատությունների շինարարական աշխատանքների իրականացմանը, որից 50 մլն կտրամադրվի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի համար օդափոխության համակարգի փոխարինմանը: Որոշմամբ հատկացվող գումարների շրջանակում կլուծվեն մի շարք հրատապ խնդիրներ՝ ջեռուցում, տանիք, պատուհաններ, օդափոխության համակարգ, սանհանգույցներ:

76 մլն 150 հազար դրամ կուղղվի հաստատությունների գույքի ձեռք բերմանը, որից շուրջ 50 մլն դրամ կտրամադրվի Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Փելեշյանի անվան տաղավարի գույքի եւ տեխնիկայի, իսկ շուրջ 14 մլն դրամ՝ Երեւանի կամերային պետական թատրոնի համար ձայնային տեխնիկայի գնմանը:

Վերաբաշխվող գումարի շրջանակում կրթական ոլորտի կապիտալ ծրագրերին կուղղվի 193.2 մլն դրամ, մշակույթի ոլորտին՝ 72.8 մլն դրամ գումար: Որոշմամբ նախատեսվող հատկացումների շրջանակում առկա են նաեւ անվանի դիրիժոր եւ երգահան Հովհաննես Չեքիջյանի աշխատասենյակի, ինչպես նաեւ հայտնի ռեժիսոր եւ սցենարիստ Արտավազդ Փելեշյանի անվան տաղավարի՝ գույքով ապահովման ծախսեր:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՎԱԾ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Դեկտեմբերի 13-ին 2020-2023 թվականներին գերեվարված Հայաստանի Հանրապետության 31 զինծառայողներ եւ սեպտեմբերին Արցախի Հանրապետությունում գերեվարված 1 զինծառայող հատել են հայ-ադրբեջանական սահմանը եւ գտնվում են Հայաստանում: Այս մասին հայտնել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով, որ նրանք նախ կանցնեն նախնական բժշկական հետազոտության եւ ապա կվերադառնան իրենց հարազատների մոտ: Փաշինյանը հրապարակել է նաեւ Հայաստան վերադարձած գերիների անվանացանկը:

Դեկտեմբերի 13-ին վերադարձած ռազմագերիների թվում էր նաեւ Վաղարշակ Աշոտի Ավետիսյանը: Նա ծննունդով Շիրակի մարզի Ջույգաղբյուր գյուղից է:

Վաղարշակ Աշոտի Ավետիսյանը դատավարությունը ընթացել էր Բաքվի վերաքննիչ դատարանում, եւ նրան մեղադրանք էր առաջադրվել 214, 228, 279, 318 հոդվածներով, այսինքն՝ ահաբեկչության եւ դիվերսիայի համար: Ըստ այս հոդվածների՝ նա իբրեւ հատել էր Ադրբեջանի պետական սահմանն ու Հադրութի հյուսիսարեւմտյան հատվածի անտառային տեղանքում մարտական դիրքեր զբաղեցրել, այնուհետեւ՝ մինչ դեկտեմբերի 13-ը, զինված հարձակումներ իրագործել:

Վաղարշակ Ավետիսյանին Բաքվի վերաքննիչ դատարանը դատապարտել էր 6 տարվա ազատազրկման:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐԸ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ Է

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի անդամ Հայկ Մարտիրոսյանն արագ եւ կայծակնային շախմատի Եվրոպայի առաջնության առաջատարն է:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում ընթացող մրցաշարի մեկնարկային 6 տուրերում Հայկ Մարտիրոսյանը հաղթանակ է տոնել եւ առաջատարն է:

Արագ եւ կայծակնային շախմատի Եվրոպայի առաջնությանը, ընդհանուր առմամբ, մասնակցում է 150 շախմատիստ: Մրցաշարի 10 ամենաբարձր վարկանիշ ունեցող շախմատիստներից մեկը Հայկ Մարտիրոսյանն է, որն արագ եւ կայծակնային շախմատի աշխարհի գործող բրոնզե մեդալակիրն է:

ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականի անդամ, գերծանրքաշային Վարազդատ Լալայանը հաղթող է ճանաչվել Կատարի մայրաքաղաք Դոհայում անցկացված Գրան պրիում, որը վարկանիշային էր Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերի համար:

Լալայանը ոսկե մեդալին արժանացել է երկամարտի 441 կգ արդյունքով (200 + 241 կգ):

Հայաստանի մյուս ներկայացուցիչ Սիմոն Մարտիրոսյանն էլ երկամարտի 430 կգ արդյունքով (190+240 կգ) կանգնել է պատվո հարթակի երկրորդ աստիճանին՝ դառնալով արծաթե մեդալակիր:

Այսպիսով, Հայաստանի ծանրամարտի հավաքականը վարկանիշային Գրան պրիում երկամարտի 7 մեդալ է նվաճել:

Ավելի վաղ Հռիփսիմե Խուրշուդյանը (87 կգ) նվաճել էր մրցաշարի հաղթողի կոչումը, Դավիթ Հովհաննիսյանն (96 կգ) արժանացել էր արծաթե մեդալի, իսկ Ալեքսանդրա Գրիգորյանը (55 կգ), Տաթեւ Հակոբյանը (87 կգ) եւ Դավիթ Հովհաննիսյանը (96 կգ) դարձել էին բրոնզե մեդալակիրներ:

ՄԱՐԶԻՉԸ ԳՈՎԵԼ Է

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի նախագահ Նասեր Ալ-Խելաիֆին գովել է փարիզյան թիմի իսպանացի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեին, որն ամռանն է միացել ՊՍԺ-ին:

«Լուիս Էնրիկեի ղեկավարությամբ առաջին հանդիպումից մենք շատ երջանիկ ենք: Նա իսկապես հրաշալի է աշխատել թիմի խաղաոճի վրա: Մենք ցանկանում ենք շարունակել նույն ոգով: Լուիս Էնրիկեն շատ մոտիվացված է: Մենք բոլորս նույն ալիքի վրա ենք»,- Նասեր Ալ-Խելաիֆիի խոսքը մեջբերում է ՈՒԵՖԱ-ի կայքը:

Լուիս Էնրիկեի պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս:

ՊՍԺ-ն դուրս է եկել Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ, Ֆրանսիայի առաջնությունում 15 տուրից հետո 36 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

● Դեկտեմբերի 18-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Շան սիրտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Մետաքսիա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմողի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Հունան Մուրադյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Սեւանում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Երեւան-Սեւան մայրուղին եկեղոմանի փակ է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Սեւան քաղաքի հարակից հատվածում ձկնորսները փակել են ճանապարհը: Ձկնորսները փակել են ճանապարհը, քանի որ արգելել են ձկների ձվադրման ժամանակաշրջանում ձկնորսությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 5	+ 2 + 7
Կոտայքի լեռներ	- 2 - 4	+ 2 + 5
Կոտայքի նախալեռներ	0 + 2	+ 6 + 9
Գեղարքունիք	- 2 - 3	+ 4 + 5
Լոռի	- 1 - 3	+ 10 + 12
Տավուշ	0 + 3	+ 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 3 - 5	+ 2 + 4
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 5	+ 5 + 9
Արարատ	0 + 3	+ 7 + 10
Արմավիր	+ 2 + 5	+ 8 + 10
Վայոց ձորի լեռներ	0 - 3	+ 2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6	+ 9 + 11
Սյունիքի հովիտներ	+ 4 + 6	+ 7 + 10
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3	+ 4 + 7
ԼՂՀ	+ 2 + 4	+ 4 + 6
Երեւան	+ 3 + 5	+ 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*